ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Հաղթող միտք

շախմատի խմբակ

3-4-րդ դասարանի աշակերտների համար

Ժամաքանակ

Տարեկան 68 ժամ, շաբաթական 2 ժամ

Բացատրագիր

Հաղթող միտք խմբակի պարապմունքները նպաստելու են սովորողների այլընտրանքային մտածողության, հաշվարկելու ունակության, տրամաբանության, վերլուծության զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերված գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Հաղթող միտք խմբակը օգնելու է զարգացնել սովորողների մտավոր և ֆիզիկական կարողությունները:

Նպատակները

- Զարգացնել սովորողների այլընտրանքային մտածողությունը,տրամաբանությունը, կենտրոնացումը, իրավիճակը գնահատելու հմտությունները և այլն:
- Բարելավել շախմատային գիտելիքները և խաղային որակները:
- Բացահայտել շախմատային օժտվածությամբ սաների:
- Նպաստել շախմատ մարզաձևի զարգացմանը:
- Նպաստել սովորողների ունակությունների զարգացմանը:
- Ձևավորել աշխատասիրություն, նպատակասլացություն, ամուր և ասպետական կամք, պարտությունը հեշտ հաղթահարելու, հաղթանակով չբավարարվելու և մրցակցի նկատմամբ հարգանք ցուցաբերելու համար:

Խնդիրները

- Ինչպես վարվել դժվարին և ծանր իրավիճակներում:
- Նոր մտքեր ու գաղափարներ առաջադրել քննարկումների արդյունքում:
- Վերլուծել ստացած տեղեկությունը, համադրելով սեփական կարծիքի հետ:
- Զարգացնել իրավիճակը գնահատելու, ճիշտ որոշումներ կայացնելու հմտություններ:
- Յուրաքանչյուր սովորողի համար հասանելիության ապահովում:

Վերջնարդյունքները

Խմբակի անդամները կկարողանան՝

- Ամրապնդել գործնական խաղերի միջոցով ստացած գիտելիքները, ձևավորել մտածված, ինքնուրույն որոշումներ ընդունելու, հույզերը կառավարելու,մրցակցին ապրումակցելու հմտություններ:

- Կիրառել ստացած գիտելիքները գործնականում՝ մասնակցելով դպրոցական, տարածաշրջանային, մարզային և կարգային մրցաշարերի և զբաղեցնել բարձր հորիզոնականներ:
- Գնահատել արդար խաղն ու ազնվությունը:
- Կարևորել գիտելիքի հստակ կապը կյանքի հետ:
- Կայացնել ինքնուրույն և մտածված որոշումներ:
- Գիտակցել համագործակցված աշխատանքի կարևորությունը:
- Կյանքի տարբեր իրավիճակներում ցուցաբերել սեփական ուժերի նկատմամբ ինքնավստահություն:

Թեմատիկ պլանավորում (տարեկան)

Հ.	Բովանդակությունը	Նպատակը	Ժամաքանակ	Նշումներ
1	Խաղի սկզբունքները և կանոնները	Սովորողներին բացատրել խաղի սկզբունքները և կանոնները: Պատրաստել նրանց ըստ կանոնների ամբողջական պարտիա խաղալու:	2	
2	Արքայական գամբիտ	Սովորողներին ծանոթացնել արքայական գամբիտ սկզբնախաղին: Կիրառել այն խաղը սկսելիս:	1	
3	Թագուհու գամբիտ	Սովորողներին ծանոթացնել թագուհու գամբիտ սկզբնախաղին: Կիրառել այն խաղը սկսելիս:	1	
4	Սկանդինավյան պաշտպանություն	Սովորեցնել սկանդինավյան պաշտպանություն սկզբնախաղը: Կիրառել այն խաղը սկսելիս:	1	
5	Սիցիլիական պաշտպանություն	Սովորողներին ծանոթացնել սիցիլիական պաշտպանությանը: Կիրառել այն խաղը սկսելիս:	1	
6	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները: Կիրառել սովորած սկզբնախաղերը խաղասկզբում:	2	
7	Մատ մեկ քայլից	Բացատրել սովորողներին մատ անելու սկզբունքները և մեկ քայլանի մատերի առանձնահատկությունները:Մեկ քայլանի մատային խնդիրներ լուծելու շնորհիվ ամրապնդել մատ թեմայի մասին ունենցած գիտելիքները:	2	

8	Երկքայլանի մատային խնդիրներ	Սովորողներին բացատրել երկքայլանի մատային խնդիրների լուծման առանձնահատկությունները: Երկու քայլանի մատային խնդիրներ լուծելու շնորհիվ ամրապնդել մատ թեմայի մասին ունենցած գիտելիքները:	2	
9	2-րդ հորիզոնական և 7-րդ հորիզոնական. թուլություններ	Բացատրել 2-րդ և 7-րդ հորիզոնականների առանձնահատկությունները, դրանց թուլությունները, ցույց տալ դրանք օրինակների վրա:	2	
10	Գրոհ տարակողմ և չկատարված փոխատեղումների դեպքում	Բացատրել փոխատեղման իմաստը, դրա առանձնահատկությունները: Ցույց տալ տարակողմ և չկատարված փոխատեղումների թերությունները, օրինակներ լուծելու միջոցով:	2	
11	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները: Վարել ազնիվ, գրագետ ու արդար խաղ:	2	
12	Ծուղակներ	Բացատրել ծուղակ հասկացողությունը, դրա առանձնահատկությունները: Օրինակների լուծման մեթոդով սովորողների մոտ ձևավորել տարբեր խաղաքարերը ծուղակի ենթարկելու և վերցնելու հմտություն:	2	
13	Զոհաբերություն	Բացատրել զոհաբերություն հասկացողությունը, դրա առանձնահատկությունները: Օրինակների լուծման մեթոդով սովորողների մոտ ձևավորել խաղաքարերը զոհաբերելու միջոցով առավելության հասնելու հմտություն:	2	
14	Երկքայլանի մատային խնդիրներ	Լուծել երկքայլանի մատային խնդիրներ, օգտագործելով նախորդ թեմաներից ստացած գիտելիքները և ամրապնդել դրանք:	2	
15	Դիրքային առավելություն	Սովորողներին բացատրել դիրքային առավելություն հասկացողությունը և դրա առանձնահատկությունները: Տարբեր խնդիրների լուծմամբ հասնել դիրքային առավելության:	2	
16	Զինվորային վերջնախաղեր. Զինվորի փախարկում	Բացատրել զինվորի փոխարկման առանձնահատկությունները, ձևերը: Դիտարկել տարբեր զինվորային վերջնախաղեր: Դրանց լուծման մեթոդով ձևավորել զինվորային վերջնախաղերում	4	

		ճիշտ կողմնորոշվելու և առավելության հասնելու հմտություն:		
17	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները: Վարել ազնիվ, գրագետ ու արդար խաղ:	2	
18	Բաց և փակ սկզբնախաղեր	Ուսուցանել բաց և փակ սկզբնախաղ հասկացողությունները, բացատրել դրանց տարբերությունները և առանձնահատկությունները:	2	
19	Սկզբնախաղային ծուղակներ	Ուսուցանել սկզբնախաղային ծուղակներ թեման: Սովորեցնել սկզբնախաղային մի քանի ծուղակներ և դրանցից պաշտպանվելու եղանակները:	2	
20	Առաջադրանքներ. Հասնել հաղթանակի	Տարբեր խնդիրների լուծման եղանակով սովորողների մոտ ձևավորել տարբեր դիրքերում հաղթանակի հասնելու հմտություններ:	2	
21	Առաջադրանքներ. Հասնել ոչ ոքիի	Տարբեր խնդիրների լուծման եղանակով սովորողների մոտ ձևավորել տարբեր դիրքերում ոչ ոքիի հասնելու հմտություններ:	2	
22	Վերջին հորիզոնականի թուլությունը	Ուսուցանել վերջին հորիզոնականները թեման, դրանց առանձնահատկությունները, թուլությունները: Տարբեր խնդիրների լուծման եղանակով սովորողների մոտ ձևավորել վերջին հորիզոնականում մատ անելու հմտություն:	2	
23	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները: Վարել ազնիվ, գրագետ ու արդար խաղ:	2	
24	Առաջադրանքներ. Երկքայլանի մատային խնդիրներ	Լուծել երկքայլանի մատային խնդիրներ, օգտագործելով նախորդ թեմաներից ստացած գիտելիքները և ամրապնդել դրանք:	2	
25	Եռաքայլ մատային խնդիրներ	Ուսուցանել եռաքայլ մատային խնդիրների լուծման տակտիկան: Լուծել եռաքայլ մատային խնդիրներ:	2	
26	Նավակային վերջնախաղեր	Ուսուցանել նավակային վերջնախաղեր թեման: Տարբեր օրինակների լուծման եղանակով սովորողների մոտ ձևավորել նավակային վերջնախաղերում հաջողության հասնելու հմտություններ:	2	

27	Վերջնախաղեր. Թագուհին ընդդեմ երկու նավակների	Տարբեր օրինակների դիտարկմամբ սովորողների մոտ ձևավերել թագուհով երկու նավակների դեմ պայքարելու և երկու նավակներով թագուհու դեմ պայքարելու հմտություններ:	2	
28	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները: Վարել ազնիվ, գրագետ ու արդար խաղ:	2	
29	Վերջնախաղեր. Նավակը փղի դեմ	Տարբեր օրինակների դիտարկմամբ սովորողների մոտ ձևավերել նավակով փղի դեմ և փղով նավակի դեմ պայքարելու հմտություններ:	2	
30	Վերջնախաղեր. Նավակը ձիու դեմ	Տարբեր օրինակների դիտարկմամբ սովորողների մոտ ձևավերել նավակով ձիու դեմ և ձիով նավակի դեմ պայքարելու հմտություններ:	2	
31	Վերջնախաղեր. Թագուհին նավակի դեմ	Տարբեր օրինակների դիտարկմամբ սովորողների մոտ ձևավերել նավակով թագուհու դեմ և թագուհով նավակի դեմ պայքարելու հմտություններ:	2	
32	Վերլուծություն հայ շախմատիստների պարտիաներից	Սովորողներին ծանոթացնել հայ նշանավոր շախմատիստների հետ: Քննարկման միջոցով վերլուծել նրանց խաղացած հետաքրքիր և գեղեցիկ պարտիաները:	2	
33	Վերլուծություն աշխարհի չեմպիոնների պարտիաներից	Սովորողներին ներկայացնել աշխարհի առաջնությունների անցկացման և աշխարհի չեմպիոնների մասին հետաքրքիր և հիշարժան պատմություններ: Քննարկումների միջոցով վերլուծել նրանց խաղացած ամենահետաքրքիր և կարևոր պարտիաներից մի քանիսը:	4	
34	Գործնական խաղ	Գործնական խաղի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները: Վարել ազնիվ, գրագետ ու արդար խաղ:	2	
	Ընդամենը		68	